


ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ
Տարեկան . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . 6 "
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Երկու քիւ մեկ ծրարով
Տարեկան . . 11 Ֆր.
Վեցամսեայ . . 7 "
ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2,60 Տոլար.
Վեցամսեայ 1,50 "
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Rédaction du journal

„Igravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА

Գրոշքիւնք եւս
չեմ տրուիր

Երանույնան տուր
20 ւանդիւն

ԴԻԻԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ
ԵՒ
ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔ

Ապարտացիք սովորութիւն ունէին իրենց զաւակներուն ցոյց տալ գինով սարուկներ որպէս զի անոր զգուշութիւնը անոնց հասկցնէին։ Այսպէս ալ պէտք է հանդիսաւորապէս վերջիւնեցնել ժողովուրդներուն այն սր-խախտները եւ այն ոճիւրները զորս իրենց տէրերը գործած են անցեալին մէջ որ պէտք է անոնք արգելին իրենց ներկայ տէրերուն նոյնը շարունակել կամ վերանորոգել։ Հոկտ. 25ի միջազգային մեծ ժողովին մէջ Անգլիացիներ, Իտալացիներ եւ Ֆրանսացիներ չար կերպով մատնանշեցին զիւրիւր կարգաւորութիւնը ամառի եւ արդու լաւագոյնութիւնը, եթէ անգլիական նախարարութիւնը՝ որ կ'իւրացի պայ-մանագրութիւնը ստորագրեց, անքաւելի անխառնութիւն ընթացքով Սան-Սթեֆանոյի դաշնագրով մասամբ ազատ-ուած Մակեդոնիոյ ժողովուրդները կրկին համախառն լուծին տակ դնե-լու, պէտք է մոռնալ թէ Գերմանիոյ կայսեր կողմէ բացայայտ կերպով Ապարիւ-Համբուի տրուած պայտա-նութիւնը հայկական ջարդերու ատեն, ցնորակի կըլլար առանց Ֆրանսայի եւ Ռուսիոյ լուծեալին համակերպու-թեանը։ Իշխան Լոպանով որ մեռած է եւ Մ. Կապրելէ Հանթօ, որ կապ-րի տիեզերական նողկանքով չըմա-պատուած, հակառակեցան իրենց բո-լոր ուժովը միակ լուծումին որ կ'ըր-նար անմիջապէս դադրեցնել մեծ կո-տորածները։ Այդ երկու նախարարնե-րուն յաջորդները պէտք է բաղձան որ պատմութեան մէջ անոնց հետագ-դատութեան դրուին։

Այդ թուականէն ի վեր Ֆրանսայի եւ Եւրոպայի մէջ մեծ փոփոխութիւն մը տեղի ունեցած է։ Այն ամեն ամեն ազատ ձայն խեղդուած էր այսօր եօթը տարուան լուծիւնէ յե-տոյ, բրօքէստօր Լորթէ, բոլկական համալսարանի աւագը, կրնայ վերջա-պէս վեր հանել այն եղելութիւնները որոնց ինք վկայ եղաւ Բայառի մէջ եւ ուրիշ տեղեր, առանց պաշտօնակու-թեան սպանալիք ընդունելու, եւ սարսափելին այն է որ համախառն

զրուիւնաց լաւատեղեակ անձերը, զոր օրինակ Մ. Վիքթոր Պետա, հաւատք չէին կրնար ընծայել ինքն չհասնողին վկային ճշմարտախօսութիւնը։ Այսպէս, Ֆրանսայի մէջ, չնորհիւ որոշ եւ ճշգրիտ վաւերացութիւնը հրապարակ դրուելուն, հանրային կար-ծիքը այժմ արթնացած է։ Վերջին փետրուար ամէն ի վեր Շա-թօ-տ'Օի մէջ՝ ուրիշ ամէն տեսակէտով բոլորովին իրարու հակառակ կուսակ-ցութեանց պատկանող ատենախօսնե-րու ներկայութիւնը՝ հաստատեց թէ այս կարծիքին մէջ համաձայն են ծա-րայիւղ ձախակողմեան ընկերակցական-ները ծայրայեղ աջակողմեան կաթո-լիկներուն եւ արքայականներուն։ Բայց բոլոր երկրներուն մէջ ինքնա-կոչ իրապաշտ պետական մարդոց մէկ սովորական պատճառաբանութիւնն է թէ առանձինն եւ առանց օտար պե-տութեանց համընթացութեան չեն կըր-նար շարժիլ։

Այս պատճառաբանութիւնն պէտք է հրաժարին։ Բարիքի, Միլանի եւ Հոն-մի ժողովներէն, Անգլիոյ մէջ կազ-մուած 200 միթիւններէն յետոյ հոկտ. 25ի միջազգային համագումարումը ա-պացուց թէ Հայաստանի եւ Մակեդո-նիոյ սիւսեմաւորի կոտորածներու շըր-ջանը գոցելու համար, աւաղ շատ ուշ, համաձայնութիւն մը կարելի էր երեք ազատական մեծ պետութեանց միջեւ։ Գերմանիոյ թըրք-Յունական պա-տերազմին յետոյ վճռեցին կրէտէի ճա-կատագրը, հակառակ Գերմանիոյ ուժ-գին ընդդիմութեանը հակառակ Ա-ւստրիոյ դէմքի ծամածռութեամբ ետ-քաշուելուն եւ հակառակ Ռուսիոյ ա-ռաջի չկառնութիւններուն, հէլլենակա-նութեան նուազ համակիր լինե-լուն։

Պետութեանց իւրաքանչիւրին կա-ցութիւնը բաւական կը նմանի այն ատենուանին։ Գերմանիան ինքզինք մէկ կողմ կը քաշէ։ Աւստրիան եւ Ռուսիան որ Պալզանիան գործերու մէջ ուղղակի շահեր ունին, համաձայն են ուրիշ բան մը չընելու բայց միայն հաստատելու դրութիւն մը ուր իրենց մասնաւոր ետութիւնները բոլորովին գոհացում չի պիտի ստանան։ Բայց Լորտ Լանստաունի նօթան՝ որ Եւրոպա-յի իրական հակակիւղը (գոնթրոլ) կը պահանջէ, Իտալիոյ մէջ նպատաւոր կերպով ընդունուած է եւ Ֆրանսայի նախարար ստիպուեցաւ կոմ Լամարտ-ֆին ծանուցանել նոր տեսակցութեան ատեն թէ եթէ ուղեք իսկ, չէր կրնար վերականգնել Արեւելքի մէջ Կապրելէ Հա-նթօի եւ իշխան Լոպանովի քաղաքա-կանութիւնը։

Մ. Տէլքաւէն մեծապէս յարգուած էր ստանձնելով Կրէտի մասին նախա-ձեռնութիւնը որ այս անգամ Անգլիոյ

նախարարին թողուց։ Եսակայն անց-եալ տարին նա ցոյց տուած էր թէ Օսմանեան կայսրութեան գոյութիւնը իսկ ներարկուած էր, Ֆրանսական կառավարութեան մարքին մէջ, անմի-ջական եւ հիմնական բարենորոգմանց տարի մը անցաւ, եւ Մակեդոնիոյ ու Հայաստանի մէջ ջարդերը կը շարու-նակուին, որով նա իր օյն ատեն-ուան զգացումին մէջ աւելի հաստատ-ուեցաւ եւ երբեք չը պիտի կրնայ հակառակիլ ընկերակցելու համար անգլիական եւ իտալական առաջարկ-ներուն։ Գալով Անգլիոյ եւ Իտալիոյ այլեւս կառավարողներու չկա-մութիւնը կամ վարանումները չպիտի կրնան յաւիտենապէս հակառակիլ հան-րային զգացումին, որ կը յայտնուի ազգային ժողովներու մէջ եւ դուրսը։ Լորտ Լանստաուն դայն հասկցաւ Պալ-զանեան Գոմթիէի հիմնալի պայքարին կազմակերպութեան ի վեր եւ թերեւս չպիտի խմբագրէ իւր պատասխանական նօթան Աւստրո-Ռուս ծրագրին, եթէ նա գրեթէ ստիպուած չլլար այն ազ-գայնիկ շարժումին որուն աջակցեցան հաւատար կորովով ազատականներ եւ պահպանողականներ։

Նոյնը կրնանք ընել Ֆրանսայի մէջ. Դեղին Գրքի չգոյութեանը միջոցին, մենք պիտի շարունակենք հրատարակել Բյո Արմենիայով, որ այս թիւով չորրորդ տարին կը սկսի։ Հայկական մարտի-րոսագրութիւնը եւ նոյնպէս Սուլթա-նի բոլոր հպատակներուն մարտիրոսա-գրութիւնները։ Ամէն ամիս նոր վա-ւերագրութիւն պիտի աւելնան այն ամբաստանագրութիւններուն վրայ զորս ամ-բողջ Ֆրանսայի մէջ ընդդէմ համախա-կան գրութեան պիտի արտասանեն ա-նոնք որոնք եօթը տարիներէ ի վեր յանձնառու եղած են պայքարին։ Ա-նոնք բնաւ յաջնած չեն Սուլթանը նշաւակելէ եւ ազգերուն ցոյց տալէ թէ աշխարհի խաղաղութեան ինչ վը-տանգներ առաջ կը բերէ շարունակու-թիւնը մարդկութիւնը անպատուող կոտորածներուն։

Այս մասին, անոնք համերայն են փոքր եւ մեծ ազգերէ իրենց բարեկամ-ներուն հետ, Տանիմարգան անցեալ տարին նախաձեռնութիւնը ստանձնեց էր Պրուսիոյ Համաժողովին, այս տարի ժօթ Լուան Պէլճիքաէն մեզ կը բե-րէր ազգու խորհուրդներ, եւ նոյն-պէս Պէլճիքաէն Մերակուտական Հան-րի Լա Յօմթէն ամենախիստ ազգաբա-րութիւնը կը գրկէր մեր տէրերուն, Վլաէ է որ ըստի պիտեանգնաներուն եւ իշխաններուն թէ իրենց խաղա-խութիւնները եւ ցանկութիւնները կը նոյնացնեն փոխելու աստիճան բոլոր պարկիւտ եւ սղատ մարդիկը։ Լաէ է որ մանաւանդ անոնք գտնուին հրա-պարակի վրայ եւ նախապաշարեալ

ու կուրացած ամբոխին ցոյց տուին սա խօսքերով «Ահաւասիկ մարդաւ-պաններու մեղաւորները»։ Դեւանագնաներուն եւ իշխաններուն կը պատկանի ուժէ ձգել Լա Յօմթէն Մերակուտականին խիստ վճիռը։ Ե-նոնք ուրիշ միջոց չունին բացի հա-զանգիւն տիեզերական խղճմտանքէն այնչափ անգամ կրկնուած հրամաննե-րուն։

Բ. ԳԻՅԱՌ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ԹՈՒՍՃՈՒԿ, 28 Հոկտ.

Տիար Յ. Գուրպէթեան
Ազնիւ բարեկամ։

Շարաթ օրուան ձեր Իրաւունք լրագրոյ մէջ ամերիկայէն նամակ մը կարգադրեց, որոյ մէջ սպանութեան դէպք մը նկարագրուած էր, զեռոր-գին Ստրգիս կը բռնուի ու միւս ճար-պիկ ոճրագործը Գասպար Նիկոնանը փախած էր, ասկէ 5-6 օր աւաջ կեղծ անցաղով Ամերիկայէն երիտասարդ մը եկաւ հոս յիշեալ Դօյմաթ գիւղէն, ու մէկ գիշեր մը մնալով եկաւ Վառնայ, կը լսենք թէ կառավարութիւնը իսկ կասկածեք է ու թրուէնի մէջ անունը իսկ հա-ցուցեր է։ Հոս միշտ կը խու-սափէր իր հայրենակիցներուն հետ տես-նուելէ։ ու երբ կը հարցուէր իրեն ուսկէ գալը, հակասական շատ մը պատասխաններ տուաւ որ նոյն իսկ իր բալթօն մոռցաւ հոս։ ու մինչեւ ցարդ ո եւ է տեղէ մը չուզեց իւր բալթօն, նախորդ ուրբաթ օր թոէ-նով մեկնեցաւ Վառնա, եթէ յարմար կը տեսնէք ձերակալիւ տուէք։

ՅԻԼԻՊԷ, 27 Հոկտ.

Իրաւունքի 82 թղթութիւն մէջ Պուլկար թերթէ մը առնելով դրած էիք թէ Մանչեսթրի Հա-յերը 100 անգլ. ոսկի զրկած են Սոֆիա Տ. Եօղէֆ Անկէլովի մի-ջոցով Մակէդոնացի գաղթական-ներուն համար։ Արժանահաւատ տեղէ մը իմացայ թէ այդ գու-մարը 200 ոսկիէն աւելի է եւ զրկած է հայ վաճառատան մը միջոցով. հանդանակութիւնը դեռ կը շա-րունակուի։ Թալմարի պէս աչ-խարհի ամէն կողմերէն լուր առ-նող թերթ մը պէտք էր որ այդ-ալ գիտնար։ Ոչ միայն Պուլկա-րիոյ Հայերը, այլ եւ Պուլկորի-

իսկէն դուրս Հայեր ալ կան եղեր որ կը նպատակն Մակեդոնացի փախստականներուն, Թիւրքէ՛ Պուլկարներու կողմէն բացուած հանդանակութեանց առաւօրէն մասնակցելէ զատ Հայերը իրենք իրենց նախաձեռնութեամբ երա- ժշտական եւ թատերական երե- կոյթով կսկիկ գումար մը հայ- թայթեցին նոյն նպատակով:

*. Թիւրքէի Հայութեան խա- ղաղ ապրիլ վրտած չէ եղեր: Հալիւ մէկ երկու տարիէ իվեր եկեղեցիի եւ դպրոցի շուրջը խռովութիւնները դադարած էին եւ կարգ կանոնի մտած էր վար- ժարանը եւ ահա այս տարի նա- ընտիր հոգաբարձութեան, ըն- թայցով կրկին տակնուվրայ կը լինի: 30 ձայնով ընտրուած ոչ ժողովրդական հոգաբարձութիւն մը որուն 2 անդամները հրաժա- րեցան, իսկ երեքը պաշտօնի վրայ անցնելով իրենց առաջին դարձը կը լինի տարեշրջանի սկիզբը պաշտօնի կոչուած երկու վարժուհի եւ ծնօրէն Գասատուն հրաժարացնել եւ անոնց տեղ իրենց ազգականներէն երկու ան- փորձ աղջիկներ կարգել:

Ծնողներ, որոնք արդէն վա- տահութիւն չունէին այս հոգա- բարձութեան վրայ, մանաւանդ այդ կամայական արարքին վրայ զայրանալով իրենց զաւակները չեն զրկեր վարժարան եւ 140 աշակերտէն միայն 10—15 կը յաճախեն շաբաթէ մը իվեր: Հանրադրութիւն մը կը պատ- րաստուի ժողովուրդին կողմէն որ մէկ օրուան մէջ 100 է աւելի ստորադրութիւններով ծածկուե- ցաւ կը շարունակուի — բազմաթիւ նախարարութեան եւ հոգաբար- ձութեան պաշտօնանկութիւնը պահանջելու:

Հոգաբարձութեան այս անյա- ջող ընտրութիւնը գառ մը լինի ժողովուրդին որ ապագային ընտ- րութեանց ատեն՝ փոխանակ անտարբեր կենալու եւ թող տալու որ այս կամ այն թայ. ֆան իր մարդիկը առաջ քշէ աղ- զային վարժարանը կործանելու յայտնի գիտումով, փութայ կա- րող եւ վստահելի մարդիկ ընտ- րել եւ իսպառ վանել դպրոցի սեմէն իրենց անձնական եւ կու- սակցական շահերը միայն մտա- ծող անհատները:

ԻՇԽԱՆ ԿՍԼԻՑԻՆԻ ԴԵՊՐԸ

Կովկասի կառավարչապետ Խորհրդո- չակ իշխան Գրիգորի Սերգէյիչ Կալի- ցնիի վրայ եղած յարձակման մասին «Կալիկազ» պաշտօնական թերթը հրա- տարակած է հետեւեալ մանրամասնու- թիւնը զոր «Նոր-Դար»էն կարտատը- պինք:

«Երեքշաբթի, հոկտեմբեր 14ին, օրուայ ժամը մօտ 3-ին, Իշխան Գրի-

գորի Սերգէյիչն իւր ամուսին Իշխա- նուհի Մարիա Ֆելոգորովնայի հետ երկ- ձի կառքով զբօսանքի գնաց Բուսարա- նական այգին: Կառքային կողքին նստած էր կազակ ուրեմանիկ Դմիտրի Սիւլիսկին: Օրուայ ժամը մօտ 4-ին նոցին պայծառափայլութիւնները վե- րադառնում էին այդուց դէպի Կոլորի խղճուղին տանող ճանապարհով: Այդ ճանապարհի զաւիթայրում, խճուղին մասնելուց ոչ հեռու, կամաց գնացող կառքի հետ հաւասարուեցան երեք մի- ջահասակ մարդ, քաղաքային պարզ հագուստով: Այն միջոցին, երբ իշ- խան-Կառավարչապետը պաշտօնանկութե- ին նրանց ողջոյններին, չարագործները՝ յարձակուելով կառքի վրայ, բղաւեցին կառքային «կանգնիր»: Նրանցից մէկը, թռչելով դէպի կառքը աջ կող- մից, որտեղ նստած էր Իշխանուհին, գրպանից հանեց դաշոյնը եւ, կանգ- նելով կառքի ոտչ դնելու տեղի վրայ, սկսեց հարուածներ տալ իշխանին: Մնացած չարագործները յարձակուեցան իշխանի կառքի վրայ ձախ կողմից եւ փորձում էին նրան դուրս քաշել կառքից, միեւնոյն ժամանակ հեռաց- նելով իշխանուհուն, որն իրենով ծած- կում էր նորին պայծառափայլութեան աջ կողմի չարագործից: Բայց իշխա- նին աջողուեց յետ մղել նրանց իւր ձեռնափայտով: Այդ բոլորէն կառա- պանը մտրակից ձեւերին եւ կառքը քը- չեց անքան արագ, որ յարձակուող- ներին չարժողուեց իրենց մտադրու- թիւնն իրագործել: Ուրեմանիկ Սիւլ- լիսկին, ցած թռչելով կառքայինի մօտից, կառքի անսպասելի արագ շար- ժումից վայր ընկաւ, բայց իսկոյն էլ վեր կացաւ եւ յարձակուեց չարա- գործներին վրայ, որոնք մի քանի զեն- դակ պարպեցին: Սիւլիսկին զիրա- ւորուեց օտից. որը ծակելով անցաւ մի դնդակ:

«Ամբողջապէս արեւնաթափաւ, բայց գիտակցութիւնը կատարելապէս պահ- պանելով եւ զլուս տալով անցնելու իրեն ողջունող անձերին, իշխան Գրի- գորի Սերգէյիչը վերադարձաւ տուն եւ կառքից դուրս գալիս հրամայեց անմիջապէս կազակներ սեղաբերել Սիւլ- լիսկին: Այդ պահուէն Կառքային անտուրքով բարձրանալով իւր սեն- եակները եւ անհրաժեշտ պատուէրները տալով, սկսեց իւր առանձնատնիսա- կում սպասել իւր կանչած բժշկի դա- րուն: Ծուռով եկած բժիշկները վէր- քերը կապելու տեսան, որ իշխանը ստացել է դաշոյնի չորս վէրք, մի հարուած դիպել էր գլխին գլխաւը կարելով, երկուսը զէմքին եւ մէկը ձախ ձեռքի արմուկի խաղին: Այս վերջին վէրքն երեսնուց է եւ ստաց- ուած է, ըստ երեւոյթին, այն ժամա- նակ երբ իշխանը կրծքին ուղղուած հարուածը յետ մղելիս բարձրացրել էր ձեռքը: Մնացած վէրքերը, բժիշկների կարծիքով, թէեւ աւելի խորն են, բայց վտանգաւոր չեն կենքի համար ընդ սկիւն գլխի վէրքը չի վնասել դան- զի ոսկորները: Վէրքերը կապուելուց յետոյ, ինչպէս հաղորդեցինք արդէն, նորին պայծառափայլութիւնը դուրս գնաց ընդունարան տեղական հասարա- կական միջոց եւ այդ ժամանակ հաւաք- ուած ներկայացուցիչներին եւ ներկա- յացուցչուհիներին մօտ:

«Երեւոյնքի բեւոյժանից ընթերցող- ներին արդէն յայտնի է, որ թէեւ անցքի հետեւեալ օրը հիւանդի տա- քութեան աստիճանը բարձրացել էր, բայց վերականգնող փոխելի տեսնուեց, որ վէրքերը լաւ դրութեան մէջ են եւ ոչ մի բարդութիւն չի գտնուած նրանց մէջ:

«Իշխանուհի Մարիա Ֆելոգորովնայի

յարձակման ժամանակ հարուած է ստա- ցել ձեռքին, որի ժամանակ կարուած է նրա հագուստը: Չնայելով իւր աչ- քի առաջ հէնց նոր կատարուած սար- սափելի տեսարանին եւ անուշաւ ա- ողջութեան համար ունեցած անհան- զըստութեան, իշխանուհին հոգեկան ըստականաչափ ոյժ ունեցաւ տեղա- կան հասարակութեան ներկայացու- ցիչներին եւ ներկայացուցչուհիներին ընդունելութեան ժամանակ գոհացում տալու անցքի մանրամասնութիւններն իմանալու համար իւրաքանչիւրի ու- նեցած հասկանալի ցանկութեան եւ, ինչպէս արդէն գրուած էր սկզբնական հաղորդագրութեան մէջ, առանց իւր խնամքի չթողեց վերադարձաւ ծառա- յին:

«Ինչպէս արդէն յայտնի է ընթեր- ցողներին, չարագործներին չարողուեց փախչել: Հէնց որ լուուեց նրանց ա- տըրճանակներին ձայնը, փոքր տեղը վազեցին պ. Լուսինի որդին եւ իւր պահակատիկութեան կանգնած քաղաքա- պա՛ն ոտակներ, որոնք վազեցին չա- րագործներին ետեւից եւ նրանց աչ- քից չփախցնելով, հ'տամուտ եղան ասիքան, մինչեւ որ վրայ հասան ան- յապաղ կանչուած ստորմիտիկները եւ պահակախմբին կազակները: Որովհետեւ չարագործները փախչելիս աւարճանակ- ներ էին պարպում դէպի հետամուտ եղողները, այդ պատճառով նրանց վրայ հրացանները կրակուած ժամանակ նրանցից մէկը սպանուեց եւ երկուսը վերաւորուեցին: Նրանց քաղաք բերե- լուց յետոյ, վերաւորներից մէկը մե- ռաւ, առանց ուշքի գալու, իսկ միւսը կարողացաւ մի քանի ցուցում տալ եւ միտաւ հիւանդանոցի ճանապարհին:

«Չարագործներին մէկի գրպանում գտնուած է անցաթուղթ: Բացի դրա- նից, նրանց պատկանած իրեղէններից գտնուած են եւ երկու դաշոյն, որոն- ցից մէկը ծառայել էր իբրեւ ոճրա- գործութեան զէնք, եւ երեք ուղղու- վեր: Այդ բոլոր չարագործները պատ- կանում են հայ բնակչութեան ստորին դասին»:

ԱՄԵՐԻԿԱՅՈՑ ԲՈՂՈՔԸ

Կովկասի մեր եկեղեցապետական կա- լուածներուն զբաւման դէմ բազմաթիւ նպատակաւ Փրովիտէնիսի (Ամերիկայի) մէջ գումարուած Պատգամ. Ժողովոյ ընտրած պատուիրակութիւնը կը ծա- նուցանէ:

«Փրովիտէնիսի Պատգամ. Ժողովոյ մէջ ընտրուած պատուիրակութիւնն որ կը բաղկանար երեք անձեր՝ Սրբազան Հայր Սարգիսեան, Տօքթ. Ս. Մ. Գաբ- ռիէլեան եւ Տօքթ. Յովն. Սրչակունի եւ ոչոք պաշտօնն էր պատրաստուած խնդ- րագիրն Ֆրանսիայի վերածելով Վա- չէնկիթընի Ռուսական դեսպանատան միջոցաւ ուղարկել Ռուսիոյ Ջաբին, հասաւ ամսոյս 14ին Ջորջթաթթի օր ի Վաչէնկիթըն եւ ի բաղակալութեան դես- պանին՝ որ դեռ Եւրոպա կը գտնուի անոր փոխանորդին կողմանէ ամենա- սիրելի ընդունելութիւն գտան եւ մատուցին խնդրագիրը, զոր յարգանք ընդունեց:

Վսեմ. փոխանորդը յանձն առաւ եւ թէ բերանացի եւ յետոյ գրով ալ խոս- տացաւ հասցնել մեր սոյն խնդրագիրն ուստի արտաքին գործաց նախարա- րին միջոցաւ առ Վաչէնկիթընի Ռուսաց:


Յետոյ պատգամաւորութիւնը այցե- լեց նաեւ Ամերիկայի արտաքին գոր- ծոց նախարարի օգնական Մատթ. Լու- միսի, որ նոյնպէս սիրելի ընդունե-

լութիւն ըրաւ եւ լսիլէ յետոյ մեր Սրբազան Առաջնորդ Հօր շնորհակալու- թիւններն իր պարբերական դիմում- ներու առթիւ վայելած համակրալից ուշադրութեան համար, յայտարա- րեց թէ ինքը միշտ պատրաստ էր իր ձեռքէն եկածը ընել օգնելու համար իրենց եղբայրը:

Պատգամաւորութիւնը կրկին շնոր- հակալութեամբ մեկնեցաւ եւ փորձեց նաեւ տեսնել Ֆրանսական Պարսից եւ Թուրքիոյ ներկայացուցիչներն ալ, բայց ամենքն ալ քաղաքէն բացակայ կը գտնուէին դեռ:

Պատգ. Շաբաթ օր վերադարձաւ ի Նիւ-Եօրք: Ջայս ի դիմութիւն մե- լազնից կը փութանք ծանուցանել ՏՐԲ. ՅՈՎՆ. ԱՐՇԱԿՈՒՆԻ Նիւ Եօրք, 21 Հոկտ.

ՀԵՐՔՈՒՄ



Տէր Խրազիբ,

Կապչեմ, յանուն անաչառ անկողնականութեան հաճեցէք հրատարակել հետեւեալը Ձեր Պատ. թերթի մօտակայ թիւերէ միայն մէջ:

ԱՆԻՐԱԿ ԶՊՊԱՄՏՈՂԻՆ.

Վերջին շաբթու հոս հասած իրաւունքի 82 րդ. թիւին մէջ իւր թէ Բուսնի թերթէ մը առ նելով Պօլոյ Հայ լրագիրներու կողմէն ինձ դէմ գրուած զրա- բանութիւն մը կարգալով, ար- ժանապատուութեան պարտական պարտք կը համարիմ ներկայ երկաւորով փութալ յայտնել ճշմարտութիւնը իր իսկութեան մէջ:

Շատ իրաւ է թէ ամեն մէկ պարագային բարոյապէս օգնած եմ մեր զաղթական Հայ եղբայր- ներէն ոմանք բանտներէն ազա- տելով, միշտ պաշտպան կանգ- նած տեղական կառավարութեան մօտ, սակայն երբէք անոնցմէ գրամ կորդելու չէ թէ իրակա- նութիւնը՝ այլ երազն անգամ չեմ ունեցած, արդէն այս մա- սին հերքում մ'ալ գրուած էր ժամանակին ակնարկուած Բու- մէն թերթին մէջ:

Թէ ո՞վ է ուրեմն այդ սնտոի զրպարտութեան հեղինակն. — տարիներէ իվեր տեղա գտնուող. . . սեւ հոգի երիտասարդը՝ որուն համար երբեմն պնակ պտտցնե- լով ողորմութիւն խնդրած ու զինքն ինքնասպանութեան փոր- ձէն ազատած ենք յիշելու մեր բարի պանդուխտներէն շատերը նիւթապէս ու բարոյապէս շահա- գործելէ չ'զոհանալով այժմ սկ- սած է իրեն յատուկ քրտութեամբ աշու ձախ մըտտել եւ մանաւանդ վարկաբեկել զմեզ քահանաներս որպէսզի ինքնուզածին պէս խաղ- ցնէ ու չորթէ իր չուրչի միա- միտները, բայց այդ անառակը թող վստահ ըլլալէթէ շատ չանց- նիր իրեն արժանի պատժին պիտի երթարկուի ինչպէս արդարու- թեան ձեռքով նոյնպէս ալ հրա-

պարսկաւ պախարակութեան իր գարշելի անցեալին եւ մանաւանդ ներկային մանրամասն ներկայութեամբ:

Առ այժմ խօսքս վերջացնելէ յառաջ սա չափը միայն կը յաւելնէ ինչ որ իսկ ալ անխնայաբար անհնգի որ Վառնայէն հոս փախչող լրտեսին ապստամանն ու գործակիցը եղած է աւելլայ. (1) որ ունեցի ակաճիւն լսելոյ լսելից է:

Մնա՛մ ազօթաւոր

Ասպետ Խ. Բենյ. Գ. Մանուկեան

1903 Հոկտ. 27

ՊՈՒՐԵՆՆԵՐ

(1) Տեսէ՛ք Պուլկարիոյ Հայ Թերթիւրը մէջ:

ՄԵՐ ՆՈՐԱՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴԸ

— Եւ —

Տ. Ներսէս եպիսկոպոս Առաջնեան իր վարած կարեւոր պաշտօններով ծառայած անուն մըն է հայ եկեղեցականութեան մէջ, հետեւաբար հարկ կը դառնայ համառօտիւ սեղեկութիւն տալ իր պաշտօնավարութեան նկատմամբ:

Տ. Ներսէս եպիսկոպոս, 61 տարեկան, ծնած է Սամաթիա եւ քանի մը տարի թաղին վարժարանին մէջ նախնական ուսումնաւորւած անկէ յետոյ, Մայր վարժարան եկած եւ հոն ուսման չընդանր աւարտած է. 186) թուականին իրեն չընդանրաւոր գաղտնի եղած եւ Ամստըրտըմ գաղտնի ծնողին Սամաթիայի Գէորգ եպիսկոպոսին հետ յիշուած է. 1863 թուականին սարկուսապ ձեռնադրուած է Մարտիրոսեան Զարեհի մէջ, եւ 1865 թուականին Տ. Ներսէս Պուլկարիոյ Պատրիարք Թաղթարանի օրով Կրօնական Ժողովոյ ներկայացած է, եւ զանազան մը անցնելէ ետք, վարդապետ ձեռնադրուած է:

Բնակութեան արտօնութիւնն ստանալէ յետոյ միեւնոյն է կրկին Ամստըմ, ուր Սամաթիոյ թաղի Ս. Աստուածածնայ եկեղեցւոյն մէջ վարդապետ ձեռնադրուած է. 1865 թուականին Մեծ Պահոց Տնտեսի կրկին Տ. Գէորգ եպիսկոպոսի Ամստըմ մէջ վարժարանէն վերջը, 1867 թուականին եկած եւ անմիջապէս զարգեալ Պատրիարքի օրով Սամաթիոյ քաղաքի թաղի կոչուած է մինչեւ 1873 թուականը. այս միջոցին էր որ չինուեցան Սամաթիոյ հրկիզեալ երկսեռ վարժարաններն, որուն մէջ ունեցած է մանաւանդ աշխատութիւն: 1873 թուականին քաղաքի կոչուեցաւ հանգուցեալ Ներսէս Պատրիարքի օրով, մինչեւ 1883 թուականը. այս միջոցին մէջ եղած է եկեղեցական Ժողովական եւ վարած է երկու կրօնական Ժողովոյ անդամակցութիւնը, ինչպէս նաեւ մասնատուողութեան եւ վանորէնի խորհրդոյ մէջ զանազան պաշտօններ: Այս միջոցին էր որ ձեռնադրուեց մշակելու անգլիերէն լեզուն: 1883 թուականին եւ զոգիւրդ առաջնորդութեան պաշտօնին կոչուեցաւ, զարգեալ Ներսէս Պատրիարքի օրով, 1885 թուականին հեռանալով իր պաշտօնէն Պուլկարիոյ վերադարձաւ եւ զարգեալ Բերայի քաղաքի կոչուեցաւ պաշտօնին կոչուեցաւ:

Զորքով անգամ ըլլալով կրօն. Ժողովոյ անդամ ընտրուեցաւ, եւ 1888 թուականին Երազմանի առաջնորդական փոխանորդի պաշտօնին կոչուեցաւ: Ժառի մը ետք ձեռնադրուեցաւ Աշտարակի խորհրդի Պատրիարքի օրով Պուլկարիոյ կոչուեցաւ, եւ կարճ ժամանակէ մը վերջ Պուլկարիոյ Պատրիարքական փոխանորդ ընտրուեցաւ, ձեռնադրութեամբ եւ անաշուտութեամբ վարելով այս պաշտօնը: Փոխանորդութեան ժամանակ Զմիւռնիոյ առաջնորդ ընտրուեցաւ եւ փոխանորդութեան պաշտօնը թողնելով 1889 թուականին մինչ 1898 թուականը, Նոյն տարին մայիս ամսուն սկիզբները վերադարձաւ Պուլկարիոյ, եւ օգոստոսի մէջ ինքն ժողովոյ որոշմամբ եպիսկոպոսանալու գնաց արդի Պատրիարքական Փոխանորդ Տ. Գաբրիէլ եպիսկոպոսի հետ:

Եպիսկոպոսութեան ընդունելէ վերջը Պուլկարիոյ վերադարձաւ, եւ 1899 թուականին զրկուեցաւ Պատրիարքական փոխանորդի առժամեայ պաշտօնով, ուր կորով եւ ձեռնադրութեան ցոյց տուաւ եւ իրեն յանձնուած պաշտօնը ամբողջովին աւարտելէ վերջ վերադարձաւ Պուլկարիոյ վերադարձաւ արտօնութեամբ: Քանի մը ամիս անձնական զարմանի համար մնալէ յետոյ Ռոստոմիոյ առաջնորդ ընտրուեցաւ եւ կը պաշտօնավարէ մինչեւ ցարդ, զրկելէ 2 ու կէս տարիէ ի վեր:

Պէտք է ըսել թէ Տ. Ներսէս եպիսկոպոս վերջին պաշտօնը չկրցաւ իր ուղած հղանակաւ վարել, Ռոստոմիոյ ցոյցներու անտարբեր եւ անպարտաճանաչ ընթացքին պատճառաւ: Ոչ առաջնորդարանի դրոճիւր վրայ խորհող կար եւ ոչ մտածող թէ Առաջնորդ մը ինչպէս կարելի է ամէն բան բախտին ձգուած էր, թէպէտ Տ. Ներսէս եպիսկոպոս անվնաս շարունակեց այս պաշտօնը, մինչեւ որ Պուլկարիոյ Հայերը ձանձնալով իր արժանիքը, կոչեցին զինքը այս պաշտօնին, որուն մէջ պիտի կրնայ մեծապէս արդիւնաւոր ըլլալ, ուժ տալով մասնաւորապէս կրթական գործին, եթէ աշակից եղողներ չպակսին իրեն:

ՍՈՒՐԶԱՆԴԱԿ

ԱԶԳԱՅԻՆ

Սապահ—Գիւլեանի վերաւորման առթիւ Լեւոն Պետրիկեանի եւ Սամուէլ Կիլիկեանի գէմ բացուած դատը վերջացած է Պէտրիկեան անպարտ արձակուած է իսկ Կիլիկեան 9 էն մինչեւ 12 տարի բանտարկութեան դատապարտուած է:

—Սօֆիա գումարուող Պատգամ Ժաշովը Գեր. Տ. Ներսէս եպիսկոպոսը Առաջնորդ ընտրելէ յետոյ հոն բնակող Եօթը պատուաւոր աղագայիներէ մասնաժողով մը կազմել է, որ մինչեւ Առաջնորդին գալը Ժողովը կազմէ:

մակերպութեան ձեռնարկելով պիտի աշակցի Տ. վահան Վ. ի իր ձեռքը կեդրոնացնելով զանազան քաղաքներէ զրկուելիք Առաջնորդութեան յատկացեալ գումարները:

—Սուրհանդակի մէջ կը կարգանք:

ՌՈՒՍԻՈՅ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐԸ Հեռագիր մը ուղղելով Ս. Հայրապետին, հաղորդել է թէ «Ն. վահանգութեանը բարեհաճած է հրամայել իրեն յայտնել թէ Ս. Կաթողիկոսին սեպտ. 12 թուակիր խնդրողը ինք կայսրը ընդունած է ի Տարմիթատ ուստեմեր 27 ին»: Հոկտեմբեր 15 թուականով կը կը գրեն Տիգրիսէ թէ, կալուածահամար կատարուելէ վերջանալէ յետոյ, պատկանեալ նախարարութեանց կամէ սկզբնաւորութեան չէ եղած տակաւին. եկեղեցական կալուածներու ամսականները անձամբ տարած են վճարելու համար. բայց պատկանեալ պատկան պաշտօնեաները պատասխանած են թէ ընդունելու հրահանգ չունին եւ այս մասին նոր կարգադրութիւն մը սպասուի Բեդէրսպուրէէ:

—Պուլկարիոյ Աղգ. Հիւանդանոցին երրորդ թիւը չինելու համար Հիւանդանոցին կից բանջարանոցը որ կը վերաբերի Յունաց հիւանդանոցին հարկ եղած է միացնել մերիւնին սակայն Յոյն հոգաբարձութիւն առիթէն օգտուել ուղղելով թէ այդ բանջարանոցին արժէքն շատ աւելի գին կը պահանջէ եւ թէ ուրիշ մէկ երկու բացառիկ պայմաններ կառաջարկէ: Խնդիրը երկու Պատրիարքարաններու միջեւ կարգադրել պիտի ջանան:

ԱՐՄԵՆ ՇԻՏԱՆԵԱՆ

ՁԻԻԼՅԻ...

Ա.

— Զեմ կրնար... չեմ կրնար... պէտք է ճամբան շարունակել: Ե՛հ, ի՞նչ ընեմ... չեղաւ: Եւ էլ ոտքով կերթամ: Մուրալով մինչեւ հոս եկայ, զարգեալ մուրալով պիտի մեկնիմ...:

— Ըսել է թէ կարեւոր խնդիր մը ունիս, անանկ չէ՞:

— Այո՛, որդիս, պէտք է օր մը, ժամ մը, վայրկեան մը չը սպասեմ: Ա՛խ, եթէ գիտնայի՛ր ի՞նչ սոսկալի ճամբաներ անցնելով հոս եկած եմ, եթէ գիտնայի՛ր ի՞նչ դաղաններու ձեռքից պրծնելով այս երկիրը նետած եմ ինքզինքս... Եթէ գիտնայի՛ր, կըսեմ, ան անոն պիտի ստիպելի՛ր զիս որ չը կենամ, հոգ չէ՛ թէ քաղիկ ոտքով սար ու քար ձեղքել պէտք է:

Այս խօսքերու վրայ, թշուառ ծերունին աչքերը լեցուեցան ու յորդկով սկսան թափուել անոր հալուածաւ նկատ զիմազմելը ծածկող մօրուքն մէջ:

Օ՛հ, սիրտս բլաւ ու չը կրցայ ինքզինքս զսպել: Մաղդկային ողորմելի արարած մը կար պէմս, որ թշուառութիւնը կը մարմնացնէր:

Ուստի ոտքի ելայ ու զողովուն ձեռքս անոր տալով, ըսի.

— Վաղը պարտքս ըլլայ ճամբուդ ծախքը...

անհոգ եղի՛ր այդ մասին ու բնա՛ւ մի՛ մտածեր:

— Աստուած պահէ՛ քեզ, որդիս, թողովեց ծերունին՝ որուն աչքերու մէջ արտակարգ ցոլացում մը պատկերուեցաւ: Սնանկ է նէ Խ երթամ Մարտոյին քով... գիշերը բարի՛:

— Զէ՛, տեղ մը մի՛ երթար... հոս տաք է, հիւր եղի՛ր ինձի:

— Գլխուս վրէ՛ն, որդիս, բայց Մարտո Ախպէր կը սպասէ զիս. աւելի աղէկ է երթամ:

Ա՛լ չը պնդեցի: Ծերունին մեկնեցաւ: Մինա՛կ, ա՛խ, մինա՛կ մնացի հակադէմ, անագործն ու սարսափի մտածումներու մէջ:

Ու հարցուցի ինքնիրենս.

— Ի՞նչ էր այդ ինկած ծերունին թշուառութեանը... Ի՞նչ խորհրդաւոր գաղտնիք մը կար իր ճամբուն վրայ, որ այս աստիճան տառապանքի մը կուտար ինքզինքը, չը նայելով ամենազարհուրելի վտանգներուն ալ: Սրբեօք սրտի հատոր մը թողած էր հոն... արդեօք յոյս մը կը սպասէր անպիտի՛ քաղաքէ մը, ուր՝ կոտորածէն ետք՝ հայր գոնէ ազատ շունչ մը առած էր...:

Բոլոր գիշերը խոփած երանքներով անցուցի:

Աստուհ, գե՛ռ լոյսը չը ձեղքուած, իմացայ դուռին զարնուելը: Շուտով մը վար իջայ ու բացի:

Եկողը ծերունին էր:

— Ժամանակ կայ. եկի՛ր վեր, ըսի իրեն:

— Ասին թէ չորհեաւ հիմակ եկի՛ր է ու ժամէ մը պիտի մեկնի, առարկից ծերունին:

Ան ատեն տուի իրեն խոստացած ճամբու ծախքը ու յարեցի:

— Եթէ վառնա երթաս, չըլլայ որ մոռնաս զիս... նամակ մը գրէ՛ անպատճառ:

— Աստուած չընէ որ քեզ մոռնամ, հառաջեց ծերունին:

Ու խղճուած արցունքով մը բաժնուեցաւ ինէ:

Բ.

Մօտաւորապէս երկու ամիսներ անցան: Ես մոռցած էի ծերունի բարեկամս խոստումը: Բայց հա՛յ յանձնարարեալ նամակ մը ստացայ, որուն մէջ կը գրէր ինձի:

1901 Յունուար 27, Բուսնուք

«Սիրելի պարոն,

«Կը ցաւիմ որ ժամանակին չը կրցայ խոստումս կատարել: Ասոր պատճառը չըլլայ որ մոռացութեան տաս: Մարդ մը իր խմած աղբիւրին քար չը նետի: Ա՛խ, ամէն վայրկեան կը փափաքէի. բայց աղեկալի վիճակս չէր թողուր: Հիմակ որ քիչ շատ ինքզինքս գտած եմ ու սիրտս հանգարտ է, կուզեմ քանի մը տողով հարցունել քեզի թէ ինչո՞ւ վառնայէն Բուսնուք եկած եմ եւ թէ ի՞նչ նպատակի կը ծառայիմ:

«Պատմութիւնս զոր համառօտ կերպով պիտի պատկերացունէ քեզի նամակագիրս, կը յուսամ թէ քու հետաքրքրութիւնը կրնայ լեցունել. եւ ասով ալ ես իմ պարտականութիւնս կատարած կըլլամ:

(Շարունակելի)

